

ՄԱՍԻՍ

ԾԱՐԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՆՈՐ ՇՐՋԱՆ

ԹԻԻ 5

30 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1906

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Աւետիսեան Զոյեւեան

Գոհար-Սիւսի

Ռուս Գրականութեան Էջեր

ԴՐՔԻՋԸ. — ԼԷՈՆԻՏ ԱՆՏՐԻԷՅԻ

Փրոնիկ?

ԵՆՈՎՔ ԱՐՄԷՆ

ԱՐԱՄ ԱՆՏՈՆԵԱՆ

ՀՐԱՆՏ ՆԱԶԱՐԵԱՆ

Ե. Ա.

50 ՓԱՐԱ

Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐ. Յ. ԱՍԱՏՈՒՐԵԱՆ

1906

THE

OF THE

OF THE

OF THE

OF THE

OF THE

OF THE

ՏՈՒԹ. ՅՈՎՍ. Տ. ՍՏԵՓԱՆԵԱՆԻ

Ժողովրդային Առողջաբանական Հրատարակութիւնները

Մանչերու բժնամին	5 դր.
Կես-բժեկական խօսակցութիւններ	5 դր.
Թոփախի վրայ կենսական ծանօթութիւններ	60 փր.
Մանչերու բարեկամը (բարգ.)	60 փր.
Կեդրոնատեղի՝ Պալենց Գրասուն, Կ. ՊՈԼԻՍ. (5—10)	

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԻՍԿԻԵԱՆ

Իրատան անունը՝ կը բաւէ առաջովելու համար գրեցական

աշխատանքները թէ՛ անիկա լրումն է ուղղամտութեան, հեղափոխութեան եւ արագութեան: Կը բաւէ անգամ մը դիմել՝ համոզուելու համար այս մասին: Հառցէն է՝ Խորատանճեան Խան, թիւ 33: (5—10)

PHOENIX ASSURANCE Ltd. Co.

“ՖԻՆԻՔՍ”

ՀԻՄՆՈՒԱԾ ԼՈՆՏՈՆԻ ՄԷՋ 1792 ԻՆ

ՊՈԼՍՈՅ ՄԷՋ ԿԸ ԳՈՐԾԻ 1869 ԻՆ Ի ՎԵՐ

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ.

Դրամագլուխ եւ պահեստի դրամ

Անգլիական ոսկի 4,218,000

Ֆինիքս սոսկ հրդեհի դէմ Ապահովագրական Ընկերութիւն մըն է, ծանօթ իր պատուաւորութեամբ և վնասներու մէջ իր անմիջական գնադրումներով:

Ֆինիքս կ'ապահովագրէ հրդեհի և կայծակի դէմ ամէն տեսակ անշարժ և շարժուն ստացուածք խիստ նպաստաւոր պայմաններով:

Ընկերութեան նշանաբանը եղած է.

ՈՒՂԱՄՏՈՒԹԻՒՆ և ԱՆՄԻՋԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՈՒՄ ՎՆԱՍՆԵՐՈՒ:

Յարդ վճարած է 27,000,000 անգլ. ոսկիէ աւելի:

Ընդհանուր գործակալ Պոլսոյ և գաւառներու.

Գ. ՎԱՐԴԱՆԵԱՆ

Վիքալիս խան, Պանօ Օթումանի մօտ, Ղալաթիա:

Փոխ գործակալ Պոլսոյ

ՃԻՎԱՆ ԹԷՔԷԵԱՆ

Ֆնագլխան խան

(5—10)

3-5 ՕՍՄ. ՈՍԿԻԻ ՄՐՑԱՆԱԿ ՄԸ

Հաստատած ենք դատաւական գործակալներու միջեւ, զոր կրնայ շահիլ ո՛ր եւ է փութաջան գործակալ: Այն անձը կամ գործակալը, որ մինչեւ Փետրուարի վերջը ամէնէն բարձր թիւով բաժանորդը կը գտնէ, և ամբողջովին կը հասցնէ մեզ բաժանորդագրելիս, կը ստանայ 3 Օամ. ոսկի: 30է վար թիւ մը չընդունուիր այս մրցումին համար: Այդ բաժանորդներէն ամէնքն ալ իրաւունք ունին ստանալու մեր պարգևները ճրիարաբ (սեւ պարգևաւոր բաժանորդագրուելին): Ո՛ր եւ է դատաւարանական կրնայ շահիլ այս պարգևը: Պէտք չկայ սպասելու 30 բաժանորդին լրամարմն: Երգելով գործակալ մը գանաք տարվջովին զրկէ իմաստ գրութեան: Կրնայ պարգևաբար զրկել իր բաժանորդները, յիշելով միշտ իր անունը, և երբ մեր տոմարին մէջ լրանայ 30 թիւը՝ անմիջապէս կը ստանայ 3 Օամ. ոսկին: Մրցանակը շահողին անունը՝ ընտելութեան տեղովը՝ պիտի ծանուցուի Մաախի մէջ: Մէկէ աւելի 30 թիւը անցնողներ՝ ամէնքն ալ պիտի ստանան նոյն պարգևը: Մրցանակին գումարը կը բարձրանայ 4 տիկի՝ երբ գործակալ մը կ'ընդգրկէ 40 թիւը, և 5 տիկի՝ երբ 50 ըլլայ թիւը: Եւ շարունակաբար: Սահմանը ընդարձակ է: Օ՛ն, ուրիմ, դէպի ամէնէն բարձր թիւը:

ԱՐԵՒԵԼՔ

Օրաթերթ արդային, զրախան և քաղաքական: — Բաժանորդագրութիւն՝ տարեկան՝ Կ. Պոլսոյ համար 80 զրշ. դատաւարութեան համար 103 զրշ. և օտար երկիրներու համար 35 ֆր: Հասցէ՝ Դալաթիա, Բաման ոս փողոց: ԱՐԵՒԵԼՔ հրապարակ կ'ըլլէ ամէն օր, կէս օրին, խնամալ բովանդակութեամբ, ընտիր յօդուածներով, թարմ լուրերով ու նորագոյն տեղեկութիւններով:

Հանգուցեալ Կարապետ Էֆ. Իւթիւճեանի թարգմանած հետեւեալ հետաքրքրական գերքերը կը ծախուին բոլոր հայ գրողաճաններու քով:

Ընտանեկան Գողմանքներ 3 հատոր	15 զրշ.
Արուարձանին Տղան 3 հատոր	15 զրշ.
Հոնրակաւքին Ոճիրը	5 զրշ.
Ամուսնութիւնք Բարիգու	5 զրշ.
Քաղաքական Տոտեաութիւն. Ժօղէֆ Կառնիէ	5 զրշ.

5 ՕՍՄ. ՈՍԿԻԻ ՊԱՐԳԵԻ ՄԸ

Մինչեւ Յունիսի վերջը Մաախի որ եւ է մէկ էջին մէջ, գրուածքի մը մէկ անկիւնը պիտի գտնուի ըսնի մը տողով ծանուցում մը, որ պիտի ծառայէ ընթերցողին ցուցնելու թէ, ինչպէս կարելի է շահիլ 5 Օամ. ոսկիի պարգևը: Այդ երկուսը գրուածքին մէջէն ճիշդ գտնող և առաջին անգամ հասցէին ներկայացնողը՝ պիտի ստանայ 5 Օամ. ոսկի: Երկուսը մէջ ընթերցողը լիովին պիտի տեղեկանայ 5 ոսկին ի՞նչպէս և ո՛ր կէտ գտնուելուն: Ամէն ընթերցող կրնայ շատ զիւրաւ գտնել այդ տողերը գրուածքներուն մէջէն: Կը բաւէ միայն ուշադիր կարդալ բոլոր գրուածքները:

ԻՄԿԱՌԱԹԵՐԹ

ԹԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՆՈՐ ՇՐՋԱՆ

ԹԻԻ 5

30 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1906

ԱՆԵԼ ՀԵՔԵԱԹ

ԱՇԽԱՐՀԱՐԱՐ ՀԱՅԵՐԷՆԸ

Առեղծուածային, անել, թնճուկուած Կորդեան Հանդոյցը՝ մեր Գրականութեան, որ չի՛ լուծուիր երբեք, անոր համար որ զայն քահելու ճիգովը յուզուած ձեռքերը չե՛ն ուզեր զիրար հասկնալ, խօսքի գալ, այլ մէկմէկէ յափշտակելով, իրենց ըսածը ընելու յամառելով, նոր կնճիռ մըն ալ կ'աւելցնեն անոր վրայ:

Մեր գրականութեան դարձուոր փիւնիկն է ան, որ ատեն-ատեն կը ցցէ զլուսը ու կը յառնէ իր մոխրակոյտին տակէն, երբ պատահաբար ձեռք կը դպցնեն անոր անկենդան մարմինին: Բայց ինչո՞ւ մշտնջենական մահուան մը մէջ չէքանար ան. — ատիկա իր կեանքին պատմութիւնը միայն կրնայ ըսել:

Այդպէսով էր որ վերջերս նորէն յարութիւն կ'առնէր ան ու նոր կեանքի մը գոյութիւնը կը զգացնէր, յնցուելով ազդարար շունչէն հրատարակութեան մը: Կի՛նքին հնչեցուցած փողն էր ադ՝ անկենդան մեռելութեանը վրայ գրականութեան քնացող փիւնիկին, անոր ձայնէն կը սթափէր փիւնիկը, կը թօթուէր ու կը յառնէր նոր յարութեան մը շունչով, անգամ մըն ալ հրապարակ բերելով Աշխարհաբարի հարցը:

Հեղինակը այդ գործին՝ որ այս տողերը կը ստորագրէ, «Դե Կար» կտորին մէջ, լեզուական ուսումնասիրութեան փորձի մը համար, տեսութիւն մը կը պարզէր Ապագայ Աշխարհաբարին մասին, հիմնուած

լեզուին ստացած արդի ձեւակերպութիւններէն հետեւցուած՝ եզրակացութիւններու վրայ, և ո՛չ ենթադրութիւններու, — ինչպէս հաւատացնել կ'ուզեն, — և զայն կը յանգեցնէր այն ձեւին, ուր կը դիմէ ան կամայ-կամայ, օրէ-օր, անպալի կերպով, բայց յայտնի նշաններով: Անիկա այդ փորձով չէր մտադրեր առաջարկել որ՝ գրողներ իրենց գրիչը լեզուի այդ ձեւին մէջ ձուլեն մէկ անգամէն, կամ թէ ան ընդհանրանայ, և տիրող ընթացիկ լեզուն դառնայ՝ բոլոր հրատարակութիւններուն մէջ՝ ա՛յսօր իսկ: Այդ տեսակ մտածում մը չէ՛ր կրնար ըլլալ անշուշտ իր նպատակը, քանի որ կանխահաս էր լեզուակամ այդ ձեւը մեր արդի մատենագրութեան ու լրագրութեան մէջ որդեգրուելու համար, և անոր ձգտումը փորձի մը ու տեսուութեան մը սահմանէն դուրս չէր ելլեր:

Բայց չկրցաւ հասնելու այս գտնաշահութիւնը, և պահպանողական տարալներու հմայքովը գինով գրիչներ՝ չվարանցան անտեղի բծախնդրութեան մը ու նշուարումի մը առարկայ ընդուն զայն, խուլ բռնքի մը մէջ իրար սնցնելով թէ, լեզուին նուիրագործուած աւանդութիւններուն դէմ քար նետել կ'ուզուի: Չայլալէցաւ «Ապագայ Աշխարհաբար»ի փորձախնդիր ջատագովը այս գուշակուած մոլեռանդ գութեան ցոյցերէն, որոց կը սպասէր՝ ճանչնալով անդրդուելի սովորապաշտութիւնը շուրջիններուն, և, հետաքրքիր հետեւող յուզուած անտաի աշմուկներուն, ուզեց հեռուէն դիտելով բաւականանալ հանդերձարուած զուարճալի տեսարանները նշանաւոր միամտութիւններու: Բայց այսօր, այդ բռնքը չեղաւած ու տարբեր գոյնով մը կը ներկայանայ, գրիչին տակ Պրն. Պարոյր Բ. Քէչեանի, որ բոլոր եղածներուն վրայ փետուր մըն ալ կը տնկէ, լեզուակամ կարծեցեալ սրբապղծութեան մը փաստաբանի անունով կոչ մը ընելով գրական իրաւունքներու պաշտպան խիղճին, և անոր ձեռնառութիւնը հայցելով՝ գործուած եղեւնին դէմ ելլելու համար:

Ժամանակ է ուրեմն որ, երկու խոսք բոլոր այս մասին, հանգստացնելու համար մի անգամ ընդ միշտ վրդոված սիրտերը: Ըսի թէ «Դեռ Կար»ին ստորագրողը իր լեզուական փորձը ընդհանրացնելու, գրական նախելու միտք մը չէր կրնար ունենալ, ո՛չ ալ կրնար երեւակայել որ՝ մէկ հայրուածով մեր գրականութիւնը կրնայ անով պատուաւորուիլ. իր գործը փորձ մըն էր պարզապէս, տեսութիւն մը՝ որուն վաւերականութիւնը, ճշմարտանմանութիւնը կամ ձախողութիւնը ժամանակը միայն կրնար ճշդել: Այդ համոզումին ինչ աւելի հսկայ ապացոյց, քան այն որ «Ապագայ Աշխարհաբար»ի տեսութեան ստորագրողը չի՛ գրեր այսօր իր հեռատեսած այդ լեզուով, և զայն չի՛ գործածեր ո՛չ մէկ տեղ: Անիկա այդ լեզուով չէ՛ գրած նոյն իսկ այն գիրքը՝ որուն մէջ անոր խոսքը կ'ըլլայ, այլ այդ իրաւունքը սահմանափակած

է մէկ պատմաւածքի մը շրջանակին մէջ, իբր լեզուական փորձի մը նմուշ: Այս պայմաններուն մէջ, ինչպէ՞ս կրնան ենթադրել որ անիկա ռանգագութիւն մը ըլլայ լեզուական ընդունուած ու նուիրագործուած աւանդութիւններու դէմ, իր արմատական զարտուղութիւններուն համար: Եւ ինչո՞ւ ան սեղի կերպով իրար կ'անցնին անցափ, երբ այդ փորձին ձեւը նուիրագործելու ո'չ մէկ ձիգ ու նշան կայ, և անոր շահելիք իրաւունքը կամ դատին կորուստը ժամանակին ձգուած է:

Այս կէտը այսպէս լուսաբանուած, կը մնայ անցնել ուրիշի մը, քանի որ Բիւզանդիոնի «Տարեկան Տեսութիւն»ին ստորագրողը չաւանանաւ միայն «Ապագայ Աշխարհաբար»ի քիչ մը խիզախ տեսութեան դէմ իր անկողութիւնով ու բողոքով, այլ չհանդուրժեր նաեւ արդի Աշխարհաբարին մէջ մոյլուած ո՛ր և է փոփոխութեան, տողորուած ներշնչումներէն դրական այն ուղղութեան՝ որուն հաւատարիմ մնալ՝ ժառանգական նուիրական աւանդութիւն մը դառնելու ուխտը ունի, կ'երեւայ թէ:

Պրն. Պարոյր Քէչեան չհանդուրժեր Աշխարհաբարի անունով եղած ո՛ր եւ է բծախնդրութեան և ճշգրտագութեան (purisme) և՛ կը սրտնեղի այդ համադումով արձակուած ո՛ր եւ է գիտողութեան:

Ահաւասիկ նոր վերագործ մը անցեալի համագումներուն և ժամանակակից յարուժիւն մը այն վէճին՝ որ զբաղեցուցած է շատերը անցնող դայող մար գրադէսներուն, որ քանի՞ քանի անգամներ գրականութեան սեղանին օրախոսքը անցած է, որ պարբերաբար յուշած է մամուլը, առանց վերջնական ու վճռական ելքի մը յանգելու, որովհետեւ յամուութիւնը և աւանդապաշտ կոյր սովորամուծութիւնը մի՛շտ անդդուելի պահած է ճշմարտութեան առջեւ գլուխ ծռելու առաքինութենէն զուրկ յաւիտենական անարագքելիները: Բայց հոգ չէ՛՝ նոր անդրադարձում մը վէճին. քարը տաշուելով-տաշուելով կը ստանայ ձեւը քանդակել ուղուած անդրին նրբութեան. գլուխներն ալ անոր կը նմանին. տաշուելով ու կտիւեւելով կը ձեւակերպուին և կը վերածուին ցանկալի յղիւնութեամբ վիճակին: Պէտք չէ՛՝ յուսահատիլ գչիլո՛ր հարուածներու պատահական, երկարատեւ ու պարզիւն սայթաքումներէն. քարին անհարթութիւնները կը նրբանան, և՛ օր մը անդգալապէս մէշտեղ կ'ելլէ անդրին, իր գիծերու և ճաշակի բոլոր ներդաշնակ գեղեցիկութիւնովը ու հրապոյրովը:

Ապահովաբար այսօրուան վէճը ալ Գրաբարի Աշխարհաբարի վէճ մը չէ՛՝ իր իսկական աւուժովը: Այսօրուանը լսի Աշխարհաբարի վէճ մըն է, յուշուած անոր ընդհանուր ձեւին ինդրական մանրամասնութիւններուն շուրջը: Բայց իսկապէս վէճ չիկայ այն գրողին համար՝ որ ինքնին հասկոյցութեան մը եկած է Աշխարհաբարի վերջնական ձեւին մասին: Եւ այս կարգի գրողներ իրենց մէջ համաձայնութեան

յանգած են ա՛յն աստիճան որոշ ձեւով մը որ՝ մէկուն ստորագրածը իր համախոհներէն ուրիշ մը կրնայ առանց դիտողութեան ստորագրել :

Բայց անդին կան անդրդուելիները, որոնք չեն կրնար հաշտութիւն կնքել արդի Աշխարհաբարի պահանջներուն ամենատարրականներուն հետ : Եւ անոնց համա՛ր և անոնց հե՛տ է որ դոյութիւն ունի դեռ Աշխարհաբարի վէճը : Այդ վէճը լայն սահման մը չընդգրկիր . ընդհակառակը . շատ նեղ շրջանակի մը մէջ կաշկանդուած է ան, և սակայն ատո՛ր իսկ զիջողութիւն մը կարելի չըլլար գոյացնել : Հին և Նոր Աշխարհաբարի տարբերութիւնը այսօր զխառնաբաւ և պարզապէս կը կայանայ հոլովներու ձեւին և ասացուածներու, յարաբերականներու եւ յօդերու գործածութեան մէջ լոկ : Ժամանակին հետ, մեր լեզուին հոլովումները ենթարկուած են ձեւակերպութիւններու, որոնց դէմ մեղանշում մը՝ դրողը կը ձգէ այն մոլորանքին մէջ, որմէ կը ծագի վէճը : Խնդիրը սա՛ է .— Ատենով կ'ըսէին .— հոգւոյ, եկեղեցւոյ, ինդրոյ, Ժամանակն, ստիպումք, կարծեօք, կարծեաց, հանգամանաց, հաճոյից. այսօր՝ պէտք է ըսել .— ինդիրի, Ժամանումի, ստիպումով, կարծիքով, կարծիքներու, հանգամանքներու, հաճոյքներու, և իր կարգին : Այս փոխակերպութիւնը ալ չկարօտիր հարցապնդութեան, և պարզ ունայնամտութիւն է պաշտպանել յամուռի այս կարգի հոլովումներու նախնական ձեւը : Չէ՞ որ նայն իսկ նորաբանութեան ուխտեալ հակառակորդներէն շատեր այսօր դարձի կուգան դադտադողի ու ծածկադէտ սպրդումներով . ասկէ առաջուան Բիւզանդիոնի խմբագրական տողերուն մէջ չէք գտներ երբեք եկեղեցիի ձեւը . այսօր հազուադէպ բան մը չէ այդ հոլովումը, ինչպէս չեն նորութեան հակող իր նմանները . ինչո՞ւ այս դարձը՝ եթէ չիկայ Նոր Աշխարհաբարի դատ մը : Առանց երկար թուումներու, կարելի՛ է՛ լայն սահմանի մը մէջ պատկերացնել ամբողջ ծագելի անհեթեթութիւնը այն արտառուց հոլովումներուն, բացատրութեան ձեւերուն, յօդագրութեան և ասացուածներուն, որոնցմէ չեն խորշիր շատեր, և որոնք ճշմարիտ Աշխարհաբարի ըմբռնումով լեզուն կը խաթարեն և կ'ապականեն, անախորժ խուժողութեան շեշտ մը տալով անոր : Կրնա՞ք հանդուրժել այսօր, օրինակի համար, սա՛ լեզուով վէպի մը .— Հայելւոյն ընդ առաջ մազերն յարդարէր աղջիկն ամօթեամբ, ոյր միտքն սեւեռեալ էր յայնժամ առ իւր սիրեցեալն կորուսեալ յօտար աշխարհի :— Ի՛նչ նախատինք է աս Աշխարհաբարին դէմ՝ որուն կ'ուրա-նան մաքուր գեղեցկութիւնը և շնորհալի վայելչութիւնը : Արդի Աշխարհաբարը խորթացնող ուրիշ տարր մը որ կայ՝ շռայլանքն է այն բրածոյ ասացուածներուն, որոնք ալ ո՛ր և է արդարացումով չունին դոյութեան իրաւունք : Ո՞ր գեղապաշտ գրող կրնայ հակառակիլ անհեթեթութեանը օրինակի համար սա ասացուածներուն՝ դորս գործածողներ չեն պակսիր տակաւին . — « Ուրեք ուրեք, ուր ուրեմն, , մերայիք, դուն

ուրեք, հուսկ ապա, հուսկ յետոյ, ի հնումն, ի գուր շարժեալ, մի քս միոյէ, քս արժանոյն, քս այնմ, ի մի բան, քս կարի, բաց ասի, նովին իրաւամբ, ո՛չ ապաւեն, վասն այնորիկ, գամ քան զգամ, մի զկնի միոյ, ի վերայ այս ամենայնի, առ ի չգոյէ, քս որում, ո՛ւմ ումեք, իւր իւրիք, և դեռ անհունապէս ուրիշներ: Գեղեցկագիտութեան ու ճաշակի պահաս է՝ տեղի տալ այս տեսակ ասացուածներու այլանդակութեան, երբ անոնց հաւատարիմ աշխարհաբարները կան: Պիտի տարրուի թէ՛ ինչո՞ւ չգործածուին անոնք, երբ բոլորովին չեն վտարուած և չեն կրնար վտարուիլ ուրիշ ասացուածներ, ինչպէս. — «Լայլն» «ի մէջ այլոց», «կէտ առ կէտ», «միանգամ ընդ միշտ»: Ասիկա փաստ է. մէկ սխալի մը նուիրագործումը, չքաւեր ուրիշի մը մեղքը: Լեզուներու մէջ, բառերը, բացատրութեան ձեւերը, ասացուածները՝ կը նմանին զարդական պէտքերու. մարդ զանոնք կը կրէ երկար ատեն, կը գործածէ մեծ հաճոյքով. բայց կուգայ օր մը՝ ուր անոնցմէ ոմանք կ'իյնան յարգէ, կը հիննան, և կը լքուին, տեղի տալու համար ուրիշներու. փողկապ մը, կոշիկ մը՝ չե՛ն կրնար մշտնջենական նորա-ձեւութիւն մը պահել. ճաշակները, գեղեցկագիտական ըմբռնումները կը փոխուին, և այսօրուան հաւնուածը՝ վաղը կը դառնայ անհաշակ՝ որ զայն կրելու չի՛ դիմանիր մարդոց ամէնէն թափթիփածը. հին զարդերուն ու պիտոյքներուն կը յաջորդեն նորերը. և փողկապի մը գնդասեղին միեւնոյն անձին վրայ տեւական պահպանումը իրաւունք չի՛ տար որ զայն կրողը չփոխէ իր փողկապը, երբ հինցած է ան ու ճաշակէ ինկած: Ինքզինքնիս չխաբե՛նք: Արդի Աշխարհաբար լեզուն ունի՛ իր սրտը օրէնքները և գեղեցկագիտական անխախտ ձեւերը, որոնց անգէտ ձեւամալ սխրագործութիւն մը չէ՛. առաքինութիւնը, մեծութիւնը զանոնք ճանչնալ ու անոնց հպատակելուն մէջ է, քանի որ անյրէ՛պ է այդ դարձին պէտքը, և պահպանողականներէ ոմանք ուղե՛ն կամ չուղեն, ան իր դերը կը կատարէ: Ինչէ՞ն է որ տեղական հրատարակութիւններու մեծ մասին մէջ լեզուն կը պահէ Աշխարհաբարի բաւական շնորհքով նոյնութիւն մը, և Բիւզանդիոնի բեմն է միայն որ՝ չբաժնուիր լեզուական անդրջնեղեղեան անհեթեթութիւններէ: Ինչէ՞ն է նաև որ, մէկ քանիներէ զատ՝ ներկայի գրագէտներուն ո՛չ մէկը կը գրէ այն լեզուով ու քերականութիւնով՝ զոր Բիւզանդիոն բռնի նուիրագործելու ծիծաղելի հաստատամտութիւն մը ցոյց կուտայ^[1]: Անպատ-ճառ խօսքը ընելուն և ի՛ր գաղափարը առաջ քշելու անիմաստ փորձին

[1] Տեղն է հոս գիտել տալու թէ՛ Մասիս կը հրատարակուի լեզուական միօ-րինակ ուղղութիւնով մը, համաձայն յատակ, մաքուր ու որոշ օրէնքներով Աշխարհաբարի մը: Բացառապէս անփոփոխ կը պահուի լեզուական ուղղութիւնը հրատարակութիւններուն մէջ այն գրագէտներուն, որոնք կը հետեւին լեզուական մասնաւոր գաւառներէն և որոնք խոստովանել են իրենց հեղինակութեան:

մէջ չիկա՛յ չա՛ն մը, երբ միտքերու ընդհանուր հոսանքը՝ հակառակ ուղղութեան մէջ իր անդիմադրելի հակադդեցութիւնը կը գործէ: Խնդիրը քանի մը չնչին սկզբունքներու վրայ է, որոնց զիջողութիւնը ընկէ մեծ նուաստութիւն մը չըլլար անշուշտ, երբ Լեզուն է որ պիտի չա՛նի, լեզուն՝ որուն իրաւունքներուն ա՛յնչափ նախանձախ դիր կը ձեւանան: Այդպէսով չէ՞ միայն որ կրնայ վէճը վերջ գտնել, մե՛ծ բան չահեցնելով Լեզուն:

Հիմա, դառնալով ուրիշ հայեացքի մը, քանի որ Պրն. Պարոյր Քէչեան լեզուական գեղեցիկատութեան, ճաշակի ու նրբութեան ճանաչողութիւնը ունեցած ըլլալու ապշեցուցիչ յայտնութիւն մը կ'ընէ, և այդ ա՛ռնով զուարճալի ինքնակոչութեամբ դատախազութեան մը կ'ելլէ, խօսելով ինդիւիւներու վրայ, որոնցմէ գտնէ իր ճաշակով մէկը պէտք էր զգուշանալ, քիչ մըն ալ վրնքը հրաւիրենք քննութեան մը, ճշգրիտ համար դիրքը և իր գերին իրաւունքը լեզուական այն Պատին մէջ, որուն ասպետան կը հանդիսանայ: Կը դարձնամ. Պր. Պարոյրն է որ լեզուական ճաշակի խօսքեր կ'ընէ, և ի՞նչպէս չզգուշանար ինքզինքը այդ ձախորդ քայլին յանձնելու վտանգալի միամտութեանէ: Մենք անանկ գիտէինք որ՝ մեք-երու, ուրբ-երու, որոց-ներու, մ'ե-երու, հուսկ յետոյ-ներու, ուրեք ուրեք-ներու և համբաւաւոր և-երու հերոս մը՝ լեզուական հարցերու ատեանին մէջ կը մնայ այն կարգադրել անդամը՝ որուն ձայնը չսուիր: Բայց Պրն. Քէչեան կ'ընդվզի քուէի իրաւունքէ զուրկ իր վիճակին դէմ, ու անոնց արածութեան, ձայն կը բարձրացնէ լեզուական կաճառի մը սրահներուն մէջ: Ըսելիք չմնար այս ցաւալի ինքնամոռացումին առջեւ. կը մնայ չորհրդ մազթել անձնակորոյս իր յուզումներուն և իրարոնցումներուն համար: Իր համոզումով, կ'երեւայ թէ, մեր նախընտրելի Աշխարհարարը չէ՛ այն Աշխարհարարը՝ որով կը գրեն մեծ մասը գեղեցիկագէտ՝ գրողներուն, այլ անեկի ուրբ-երով որոց-ներով, ևա-երով, ուրեք ուրեք-ներով, համբաւաւոր մեք-երով այժմագեղգեղ մ'ե-երով ու յաւիտենական անխորհչելի անհեթեթ և-երու վայրենի խուժուժութիւնովը խաթարուած աշխարհարարը, զոր ամբողջ ընտանիքով փառաբանելու և անմահացնելու մոլեռանդութիւնովն են գինովցած Բիւզանդիոնի մէջ: Ձէ՛, ասկիա մոլութեանը ու յաւակնութիւն է: Ես յարգողներէն եմ Բիւզանդիոնի իմրա-գրողներին արժանիքը՝ իբր ճարտար լրագրող, և հիացումով կը դիտեմ իր այն ոգին՝ որ լրագրութեան պատիւը ու վարկը բարձր բռնելու կը ձգտի, խուսափելով լրագրական լսարոյսիանի և կոչումի հակառակ դեմադրարչ շահագրգիռութիւններէ, հակառակ իր հաշուագէտ խառնուածքին, որ կրնար ո՛ր եւ է մէկէ մը աւելի մոլորեցնել զինքը, դէպի Շահի ցանկութիւններուն իրականանալի միջոցները: Բայց այս հաւատարմ չարգիլիւր վիտ որ՝ զարմանքով չզիտեմ այն յամառութիւնը՝ որով չուզեր թօթափել ա՛լ արժէքէ ու պատիւէ ինկած գրական սկզբունքներ, որոնք չեն կրնար հատուտամիտ սրահականութեան մը մէջ նուիրագործուիլ: Ժաման

նալը իր զերը կը կատարէ անմիջապէս՝ դրական հարցերու մէջ, և կարելի է թուամբ կանգնել անոր դէմ. պէ՛տք է հարստակիլ հոտանքին. հո՛գ է մեծութիւնը: Եւ ինչո՞ւ կեղծ հեռութեամբ վերադառնալ մը մէջ այդ սուտ նադարը ու ծեփծեփումը: Ամէնէն անդրդուելին Բիւզանդիոն իսկ, այսօր կամաց-կամաց կը սկսի հպատակիլ իր հակառակած սկզբունքներուն, դարձի վաղով նոյն իսկ անահկ բաներու մէջ՝ որոնց որդեգրումը ուրիշներու քով՝ գէշ կ'երեւայ աչքին: Պզտիկ օրինակներ. — Բիւզանդիոն ինչպէս կը գրէ այսօր՝ բարուոք, փշուռ, առնելիքուռ, կը յայտնէ ու-երէն մէկը ու կը գրէ բարուք, քիչուր, առնելիքուր. ինչո՞ւ այս դարձը. կամ երբ ասիկա օրինաւոր կը նկատուի, ինչո՞ւ զայն դատաւարտել այս տողերը գրողին քով՝ որ այդ սկզբունքին կը հետեւի ու-ու արատաւնուող կրկնուած ու-ով բառերու մէջ: Եւ, սկզբունքը ընդլայնելով քիչ մը, քանի որ «բարուք» ձեւը ոչի՛նչ ունի առարկիւի, ինչո՞ւ նոյն ուղղադրութիւնով չգրուին, չառերու մէջէն, օրինակի համար. — ալուռ, բուռ, պատասխանասուրիւն, երբ ա՛ն է ճիշդը: Այս օրէնքին մէջ գրուած խորութիւնը չունի՛ որ և է արդաւրացուցիչ փաստ: Կ'ըսեն թէ լեզուն գործիք մը չէ՛, զոր կարելի ըլլայ փոխել մէկ հարուածով. ո՞վ կը հակառակի ատոր. բայց պէտք է նաեւ պնդել որ՝ անոր ստացած բնական ձեւափոխութիւններուն կարելի է հակադդէ: Մեր լեզուն, ինքն իրեն՝ օրէ-օր կրելու վրայ է գդալի փոփոխութիւններ, անսեղիտալի, անդիմադրելի՛ կերպով. բխալը՝ չճանչնալն է գէրը այդ յեղաշրջութեան, և անոր չհետեւիլը, ո՛չ թէ զայն պաշտպանելը: Առաջարկուած և պաշտպանուած լեզուական ուղղութիւնը ճանչնալու պէ՛տքն է այդ շրջափոխութիւնը: Ասկէ առաջ, մինչեւ մօտ ժամանակներ, հիմա կը գրուէր յ-ով, այսօր այդ սխալին հետեւող չիկայ՝ գրելթէ. ինչո՞ւ ուրեմն չվարարուին յ-երը բոլոր այն բառերուն մէջէն, ուր չէ՛ն արատաւնուիր. — վրայ, քահանայ, փեսայ: Պիտի տուրիւի թէ, եղակի սեռականներու և արականներու մէջ շփոթութիւն կը ծագի. ինչո՞ւ չեն ուղեր. մտածել նոյնօրինակ բառերու յօքնակի ուղղականներուն վրայ. այսօր ո՞վ կը գրէ «քահանայներ» և «փեսայներ». Բիւզանդիոն իսկ՝ կը գործէ՝ աստանկ աղանդակութիւն մը. քանի որ ծանօթ է թէ՛ ո՛չ, ուրեմն ինչո՞ւ մէկ պարագայի պաշտպանել ընդունուած այդ օրէնքը, և ուրիշ պարագայի մը նշուակել: «Այլ առակ լուարուք»: Ասկէ առաջ, «ուռ», «անուշ», «անշուշտ» կը գրուէին յ-ով. այսօր կը գրուին ու-ով. ինչպէ՞ս կ'ըլլան ասոնք: Ժամանակը, միտքերը, լեզուական ճշգրտանդրութիւնը կը կատարեն իրենց սրբագրութեան դերը: Կարելի չէ՛ խոյս տալ անոնց ձեռքէն. պէ՛տք է հետեւիլ ու հպատակիլ: Եւ անոնք ի՛նչպէս որ եղեր են ու կ'ըլլան, վաղը կ'ըլլան նաեւ ուրիշ լեզուական փոփոխութիւններ և պէ՛տք է որ ըլլան: Ահաւասի՛կ սկզբունքը հարցին, և իրողութիւններ՝ որոնք իրենց դատին պաշտպանութիւնը կ'ընեն պերճախօս կերպով: Ի՛նչ է ուրեմն բաժնին: Ա՛դ է որ հասկցուիր:

Լեզուական անդոյ վտանգի մը միջառանձով անարեկութեան ճիշդ արձակիլէ առաջ, պէտք էր որ դիմաւորին քիչ մը քննած աչքերնին բանալ ու չուրջներնին դիտել, տեսնելու համար թէ... «Ի՛նչ կ'անցնի կը զատնա...» ... Լեզուի աշխարհին մէջ:

ԵՆՈՎՔ ԱՐՄԷՆ

ԳՈՒԱՐ-ՍԻՐՏԸ

Տանը մէջ, բազմոցին անկիւնը, հին գոհարեղէններ մըն է խաթուն-մամիկը:

Հարկաւ տեսած էք հին գոհարեղէններ: Անոնք շատ ճարտար ագուցուածք մը չունին: Ոսկին որ դօսի կապուած է անոնց շուրջը, մեծ խնամք է տեսած, ոչ իսկ կը շողայ, տեսակ մը ազտոտ մետաղի կը նմանի, և թերեւս չհետաքրքրուիք ու չվերցնէք՝ եթէ երբեք պատահմամբ գետինը, ձեր ոտուքներուն առջեւ գտնէք զայն: Անոր կոշտ ու ձեւատ կամարին միտած քարերն ալ մեծ հրապոյր մը չունին. պոռոտ ու աններդաշնակ գոյներով գոհարներ են, և շատ անճաշակ կերպով մը ծաղիկներ ու նշանակներ կազմած են ոսկի բունին վրայ, որուն տգեղութիւնը կը չեշտեն:

Բարի խաթուն-մամիկը որ իր աւանդական անկիւնը բռնած՝ թու-նիկին դուպան կը հիւսէ տեսակ մը մեքենայիս միօրինակութեամբ, առանց խոնդի ու հապճեպի, ճիշտ այդ հին գոհարեղէններուն պէս ո՛չ ճարտար ագուցուածք ունի, ոչ ալ հրապուրիչ երեւոյթ: Դարաբոյր չփախ մը գրկած է անոր յոյլ լանջքը, որ առանց սեղմիբանի աճած ըլլալով լայնի զանգուած մը դարձած է և ներդաշնակ համեմատու-թիւն մը չի պահեր գլխուն ու զիտերուն հետ: Իր շրջազգեստը նոյնպէս հնաձեւ ու անպաճոյճ է: Ոչ իսկ նրբին դարդերիդ մը ապարանջան կապած է անոր փէշին: Վաղընջուց ֆօքօզը որ անոր երկնջի հիւսուած մագերը կ'ամփոփէ, վարդաբոյր ու լուսազէս ժանեակներ չունի, խառն օյալով շրջանակուած է, և օյան միայն մութ ու սգաւոր գոյներ կը պարզէ, գոյներ՝ որոնք չեն հրապուրեր, որոնք երեսիդ չեն խնդար: Ուրբերն ալ բուրդէ կոշտ գուլպաներ անցուցած է, ու աճեւ՝ բայց աաքուկ հողաթափներով կը շրջի:

* * *

Սակայն հին գոհարեղէնին քով կայ նաև նոր գոհարեղէնը, և որչա՛փ ալ սիրուն ու գրաւիչ է անոր երեւոյթը: Մէկ տեսնելուդ՝ սիրտդ կը բացուի: Ոսկի կամարը կարծես հաղար արեւի լոգանքը առած է, կը շողայ ակնախորիզ ճաճանչներով՝ որոնք խորհուրդի քօլ մը կը ձգեն անոր հոգւոյն վրայ և զայն պաշտելի կը դարձնեն: Նրբին ու հիանալի արուեստ մը տեսակ մը վերացիկ՝ գրեթէ եթերային ներդաշնակութիւն տուած է անոր. այնքան չնորհալի է, մանաւանդ այնքան փափուկ որ կը քաշուիս ձեռք դպնելու, — ինչպէս նոր փրցուած ծաղիկ մը թերթիկներէն չես բռներ, վախնալով որ մասնէրուդ նոյն իսկ քերմու-թիւնը կը պղծէ անոնց թարմութիւնը: Յանկուցիչ գոհարներ սլակ կտալած են անոր մէջքին, կը վառին գարնան առողման մը գարկը:

նումը աւետույ արիւնի չողերով: Իրենց հրաշափայլ փառփողումը համը հրաժշտութիւն մըն է, բոլոր գեղեցկութեանց փառաբանանքը կը տալէ երկնային խաղերով: Որչափ դրախտագեղ ծաղիկներ բայցած են այդ գոհարները՝ ոսկին քանքի՞մ ու կուսական պորտին վրայ: Վերածնող բնութիւն մը, կեանքով օծուած դաշտ մը որ իր բիւրաղան ծաղիկներուն խառուածիկ կոկոնները արեւին համայնութեան կը յանձնէ: Ամէն քար իր տեղն է, ամէն գոհար իր փայտին ու վառքով ուրիշ գոհարի մը դոյնն ու վառքը կ'ամբողջացնէ. անոնք ո՛չ միայն իրար չեն ընդոտներ, այլ կը շաղապատուին խոնարհ ներդաշնակութեամբ մը, իրարու կը փարին, իրար կը գրկեն, կը զուգուին ու կը նոյնանան՝ սիրող սրտերու պէս: Ու մինչդեռ հին գոհարեղէնները նոյն իսկ թիթեղեայ պարզ տուփերու մէջ կրնան պահուիլ, առանց իրենց արժէքէն բան մը վրայ տալու, այս նոր գոհարեղէններուն փայտեւթիւնն ու աղւորութիւնը անեղծ պահելու համար՝ թաւիչով ու մողուսով կապուած բլւրաւոր պահպանակներ պէտք են:

Այսպէս ալ՝ խաթուն-մամիկին քով կայ իր նազելի հարսը: Հին գոհարեղէնին դէմ՝ նոր գոհարեղէնն է ան: Տեսնողին՝ միայն սիրալը չի բացուիր, հոգին մէկտեղ կը խայտայ: Անոր կաթնաթոք աշտերուն վրայ նուր իր կարմիրը բացած է. շրթունքները վարդի թերթիկներ հագած են, և ամէն անգամ որ ժպտի մը փոթորիկ կը մտանէ զանոնք, անբխին ծաղիկներու հազար-կոկոններ մէկանց կը յայտնուին անոնց երկայնքը: Անոր պճտուն բլբլերը մշտայայտ ովկէանոսի մը մէջ խրատող նայեալներ են, անքան փորձիչ թաւք, այնքան կախարդիչ ու անգլխազրելի նազանք ունին որ կը հրապուրեն ու կը կարթնեն: Եւ այդ աչքերուն վրայ յոնքերը կամար կապած են այնքան յանձնադրոտան առուգութեամբ մը որ դիւցաղներ չափով վարանէին անոնցմով իրենց աղեղ շինելու: Անոր գուշին զրզոտ փոսիկը՝ մինակը կը բուէ անմահութիւն մը գոհելու: Երբոր մաղերը կը թափէ՝ համբուրելի խոտուպիկներու աշխարհ մը կը ծնի իր կարտալի վզին բոլորովը, — ամպի արջնաթոյր գուլաներ՝ որոնք ձիւնապիտակ երկինքի մը վրայ կը մկան ու կը գալարուին: Ոչինչ ունի անհամաչափ ու աններդաշնակ ձեւերը՝ խորտոխ ու կակուղ՝ ինչպէս աղանիի մը կարծքը. աչքերը մանրիկ՝ նոյնպէս նման թռչունի. երբոր անոնք շրջազգեստին յորձանքը կը գլեն, կարծես երկու ձագուկներ են՝ որոնք իրենց երկչոտ գլուխը բոյնէն դուրս արձակած՝ մայրենի բերանը կը հետապնդեն: Անոր արքինի հասակը հելլէն անդրիններու կատարելութիւնը ունի, ուղղաձիգ ու ճկուն է՝ ինչպէս արմաւենին: Եւ բնութիւնը մինակ չէ մնացած այս հրաշալի պուպրիկին պաճուճանքին մէջ. արուեստն ալ իր բաժինը բերեր է այդ գործին, ու մէկ գեղեցկութեան տալը և աւելի գեղեցկութեանց հմայքը տուեր է: Անոր հագուստները ճաշակի հրաշալիքներ են, տան-

թէշներով, ժանեակներով, մուսլինով և հագար տեսակ պատէշներով պնտուած : Բոլոր գոյները իրարու ձուլուած են անոնց վրայ, ու գոյացած երկներանգ խառնուրդը՝ ժանեակներու և տանթէշներու փոխրացեղ ալիքներուն մէջ՝ աւելի աղուոր ու գիւթիչ է քան ծիրանի գօտին՝ փոթորիկին խռովքով ուռած ամպերուն կտաւարը : Երբոր գլխարկը կը դնէ, ամբողջ գարուն մը կը ծաղկի սեւուլիկ մագերուն վրայ : Քալած ատենը դիցուհիի մը պատկառանքը կը սփռէ իր շուրջը, և քանինն իրենց սիրտը կը նետեն անոր ոտուքներուն տակ, կը թողուն որ կոխկրտէ, ձիւտ նախնի մարտիրոսներուն պէս՝ որոնք աստուածային էակին սիրոյն քաշուած ցաւն ալ իբր հեշտանք, իբր սփոփանք կ'ընդունէին : Եւ որպէս զի իր թարմագեղ փափկութիւնը անեղծ մնայ, նոր գոհարեղէններուն պէս անհրաժեշտ պէտք ունի թաւելի, մեղուսի, բոլոր ծանրազին կերպաններուն, բոլոր նրբարուեստ ու շքեղ զարդեղէններուն :

* * *

Բայց երբ հին գոհարեղէն մը և նոր գոհարեղէն մը կը ներկայացնենք գոհարավաճառին, անիկա ձեռքը անմիջապէս հինին կը նետէ : Նոր գոհարեղէնին ո՛չ փայլը զինքը կը յանկուցանէ, ո՛չ ալ հրաշալի սարքուածքը : Արուեստի ու խնամքի պակասը որ առաջինը կը յատկանշէ, արժանիք մը, առաւելութիւն մը, տեսակ մը յանձնարարազիր կը դառնայ իր աչքին, մինչդեռ միւսը որչա՛փ աւելի աստուածային ներգաշնակութեամբ մը օժտուած ըլլայ, որչա՛փ աւելի հոգածութիւն ու գուրդուրանք տեսած ըլլայ, որչա՛փ աւելի շողայ ու վառի՝ կարծես այնքան կասկածոտ և զգոյշ կը դարձնէ զինքը : Ան աւելի արամազիր կ'երեւայ հինը գնելու քան նորը, աւելի հին գոհարեղէնին զին կու տայ՝ քան նորին :

Եւ դուք յուսախաբ կ'ըլլաք, որովհետեւ անա՛նկ կը կարծէիք թէ փողփողուն ու սրտադրաւ նոր գոհարեղէնը շատ դրամ պիտի բռնէ բաղդատմամբ հինին՝ որ ոչինչ ունի հրապուրիչ, որ ժպտի ծիւ մը անգամ չի բանար հոգիին վրայ : Կը զարմանաք ու պատճառը կը հարցնէք : Եւ ահա թէ ի՛նչ կը պատասխանէ ձեզի .

—Մենք փայլը կը ծախենք, չե՛նք գնենք . իրերու արժէքը՝ մեզի համար՝ իրենց արտաքին հրապոյրին մէջ չէ, այլ ներքին յատկութեանց մէջ : Իրերն ալ իրենց սիրտը ունին՝ ինչպէս մարմինը . մենք այդ սիրտը կը վնտռենք, և անոր աղնուութեան համեմատ կ'որոշենք անոնց արժէքը :

Յետոյ՝ փորձաքարը ձեռք առնելով՝ ձեր ապշահար աչուքներուն առջեւ կը մերկայնէ սիրտը այն գոհարեղէններուն՝ զորս իրեն ներկայացուցած էիք : Եւ ինչ որ կը յայտնուի՝ բոլորովին կը մեծցնէ ձեր զարմանքը : Դուք կը տեսնէք որ հին գոհարեղէնին անփայլ՝ գրեթէ

աղտի սեւասոււկով օծուն մետաղը աւելի թանկագին է քան նոր գոհարեղէնին արծառն ու լուսասփիւռ ոսկին։ Որովհետեւ երկուքն ալ ոսկի են, և հին գոհարեղէնին ոսկին անհունապէս աւելի յարգի է քան նոր գոհարեղէնինը։ Ձեր զարմանքը տակաւին աւելի կը մեծնայ երբ գոհարավաճառը ձեզի ցոյց կուտայ նաեւ քարերուն սիրտը, քօղազերծ ու հոլանի։ Նոր գոհարեղէնին հրաշալւաւ քարերը, որոնց ճաճանհները աչք կը խոցեն աղեղնարձակ նետերու պէս, աւելի Ֆօլաջով կը շողան քան իրենց ջուրով, աւելի սնդոյրով կը փռլիոյին քան իրենց արուած յղկումով, և նուազ կ'արժեն քան այն ճշմարիտ քարերը՝ որոնք անձաշակ յարգարանքով մը հին գոհարեղէնը կը խճօղեն։

—Մի՛ զարմանաք, կը յարէ գոհարավաճառը, հինները այսքան նրբին արուածտ չունէին, կամ այսքան նրբութեամբ կեղծելու եղանակը չէին գիտեր. անոնք յարգի ոսկին միայն կը գործածէին ինչպէս նաեւ ճշմարիտ քարերը, հետեւաբար անոնց արժէքը չեղտելու համար չպարի պէտքն անգամ չէին զգար. ոսկերիչին բովանդակ մտահոգութիւնը գոհարեղէնին սիրտին վրայ կեղբոնացած էր, և երբ սիրտը լաւ էր՝ այլեւ ի՞նչ ընէին արտաքին յարգարանքը։ Հիմակումները սակայն՝ հազար ու մէկ հնարքներ սորված են. արուեստը իր կեղծին հետ զարգացեր է. քանի՛ յառաջացեր է, այնքան սիրտը մուսայութեան արուեր է, և այսպէսով՝ զուտ ձեւական, մակերեւութային, հետեւաբար՝ ներքին արժէքէ զուրկ չքեղանք մը դարձեր է։ Փայլն ու շողքը սիրտին աղքատութիւնը քօղարկելու համար միայն շուայլուեր են. անոնք կը հմայեն, բայց նոյն ատեն ալ կը խաբեն։ Հիներուն մէջ՝ գրեթէ բնաւ չէք գտնիր ատանկ անարժէք գոհարեղէն. բայց նոր գոհարեղէններուն մէջ՝ հարիւրն ու թուանը և աւելին այդպէս մինակ իրենց արտաքինովն են արժէքաւոր։ Ահա թէ ինչո՞ւ հին գոհարեղէնները կը նախընտրենք նորերէն...

* * *

Եթէ երբեք կարելի ըլլար ոսկերիչին փորձաքարը գործածել նաեւ պարզուկ անխօսուկ մամիկին և իր ոստոստուն ու շողալաւ հարսնուկին համար, մենք նոյնքան հին ու ներքնապէս արժէքաւոր գոհարեղէն պիտի գտնէինք առաջինը, որքան վերջինը նոր՝ և իր արտաքինով միայն արժանի ու հմայքոտ։ Իրերու սիրտը պարզելէ վերջ՝ մարմիններու սիրտն ալ պիտի մերկայնէինք, և մէ՛կ այդ քօղազերծումը պիտի բաւէր որ աւելի հաստատուէինք մեր նմանութեան մէջ։

Երբոր «մամիկ» կ'ըսենք, պէտք է հասկնանք ամբողջ հին Հայ կնոջ սերունդը որ իբր ընտանեկան օճախի անվկանդ սիւն մը իր որոշ դերն ու տեղը ունէր տան մէջ։ Եւ «հարսնուկ» ըսած ատեննիս ալ պէտք է միտքի առջեւ բերենք արդի հայ կինը որ բազդատմամբ միւսին՝ այնքան հոգեթով ու հրապուրտ, այնքան մանաւանդ շողասփիւռ ու շնորհալի

է, և որ ստիպան միայն իւր զարդ, միայն իւր պաճառճանք զոյաւթիւն ունի տան մէջ, յայտնի չէ թէ ինչ է իր դերը, ո՞րն է իր տեղը: Տունը, ընտանիքը՝ կրնան առանց զարդի ալ յարտաւել: Բայց սիւնները անհրաժեշտ են որպէս զի օճախը կանգուն և անտատան մնայ, տարիներու փորձութեանց ու բաղխումներուն դիմադրէ: Սերունդներ առաջացեր ու դարեր կրծեր են նահապետական անպաճաճ պարզութեան մէջ, որովհետեւ օճախը իր սիւներէն զուրկ չէ մնացեր, և սիւններն ալ հաստատարմութեամբ իրենց դերը կտտարեր են: Մինչդեռ հարուստ ու փարթեամբ ընտանիքներ՝ ճոխութեան և ամէն առտակ չքեղութեանց մէջ լողալով հանգերձ՝ ոչ իսկ քանի մը սերունդ բոլորեր են, որովհետեւ տակաւ սիւնները տկարացեր ու ինկեր են, օճախը հիւծեր է, և տարիներու մակընթացութիւնը իւր անշոր խեղանքով քչեր տարեր է գանձնք գէպի կորուստ: Անոնց հետքն իսկ չէ մնացեր այսօր:

Ի՛նչ ինչ հայ կինը, յարգել սակի՝ թէեւ անդեղեայց պճնաւած այնքանն պոռոտ՝ բայց արքի քարերով, ո՛ւր արդի հայ կինը, չաղանշոյլ ու արխափայլ՝ թէեւ անարժէք իր սակիւն ու գոհարմարով: Սիրտերը անհուն տարբերութիւն մը տապէր են մէկէն միւրը: Հինը մայր-գետ մը ունէր իւր սիրտ, և այնչափ աղուոր յատկութիւններ ու տաքիւնութիւններ այդ ակէն բոլորով առուներ կը կազմէին, երակ-երակ կը տարածուէին անոր բովանդակ էութեան մէջ, և զայն աշխատութեան, բարութեան, գութի ու սիրոյ մարմնացում մը կը դարձնէին: Նորը՝ մօրացած լիճ մը միայն ունի սիրտի տեղ, և այդ լիճը չի յուզուիր, որովհետեւ մեռած է: Կը վառի թէեւ, նոյն իսկ ակնախոփոյ ցոլքեր կ'արձակէ, բայց երեսանց միայն, իր ծածկած ջուրը զուլալ չէ, հազիւ զայն կը խառնէք՝ ահա իսկոյն կը սղտորի, և իր լուսնադէտ ճաճանչները խառարտայլ անդերու քօղը կը հագնին:

Տա՛ւ մէջ՝ հին կինը իր որոշ պարսքերը ունէր. առտակ մը մոյթ էր ան, և երբ օր մը չէր երեւար՝ կարծեւ օճախը կը սարսէր ու կը կքէր: Ո՛չ անտի բղձանքներու մտահոգութեամբ կը սուսոյտէր, ոչ ալ փոճ պերճանքի մը սիրով կը համներ: Երբոր հարս կ'երթար՝ ա՛յ աւելի իր վիզին անցում աշխատութեան լուծին վրայ կը մտածէր՝ քան իր ակնաշիթուններէն կախում գինդերուն: Ան գիտէր թէ ինչո՞ւ կ'երթայ, որովհետեւ մօրը օրինակով մեծցած էր, վստահութեամբ կը մանէր իր առջեւ բացում կեանքի նոր արահետը, և լուսկեաց ու մշտարթուն կը կապուէր իր պարտականութեան, կը կլկթուէր անոր այնքան սերտիւ և հաւատարմութեամբ՝ որքան վաղընջուց մոգպաշտօններ կը յարէին իրենց պետերուն: Եւ որովհետեւ ամէնքն ալ՝ այրերն ու գաւալներն ալ՝ այդպէս իրենց պարտքին կը շղթայուէին, ընտանիքը՝ սիրոյ լոյն մը կը դառնար, ո՛չ իրարու սիրտ կը կտրէին, ոչ ալ կադ ու կռիւ կը յարուցանէին: Անոնց ամբողջ հրճուանքը աշխատութեան ու

պարտքին լրումը ունէր իրեն առանցք. անոնք գրեթէ իրականացած էին մարդկային երջանկութեան բանդադուշանքը...

Արդի՛ կ'ինը սակայն պարտքեր չունի՝ երբ հարս կ'երթայ. հետեւաբար՝ չաշխատիր, ու նուազ երջանիկ է. — չըսե՞նք թէ դժբաղդ ալ է: Տան մէջ՝ արիւմտեմ շողանցիկ մըն է, տեսալ մը շրջմովիկ հուր, կը յայտնուի ու կ'անհետանայ, կ'ոտոտոտէ մէջ մը մէկ կողմ, մէջ մը միւս կողմ, կ'երգէ կամ կը նուազէ, շաղակրատ ու ծոյլ է հաղար ճպուռի պէս: Եթէ տարի մըն ալ չերեւայ՝ ոչ ոք կը զգայ իր պակասը: Իր զուտակներն անգամ օտար ծիծեր կը գիւցնեն, և միշտ օտարին ձեռքն է որ անոնց առաջին քայլերը կ'ուղղէ: Իր բովանդակ մտահոգութիւնը մարմնին յարգարանքին, հագուստին ու կապուստին վրայ կ'երբանացած է, կը շքուի ինչպէս զիջանոյշ մը և գոհ է առով: Ընտանեկան սէր, ասն խաղաղութիւն, սրտի հրճուանք և հոգիի երանութիւն՝ անծանօթ են իրեն. ոչ իսկ անոնց պէտքը կը զգայ: Ասոր համար արդէն այնքան բարօրութեամբ օփտուած ըլլալով հանդերձ՝ տունը դժոխք մը կ'երեւայ իրեն, և միշտ առիթ կը փնտռէ անկէ խոյս տալու:

* * *

Իմ խօսքս ամէնուր համար չէ՛, ո՛վ իմ նազելի քոյրերս: Գիտեմ որ ձեր մէջ ճշմարտապէս պաշտելի տիպարներ ալ կան, որոնց սիրտին խորը՝ իւր մշտավառ ստրուշանի մը մէջ՝ շատ թանկագին յատկութեանց և աղուոր զգացումներու խունլը կը մխայ: Բայց կրկին ձեր մեծամասնութիւնը նոր գոհարեղէնն է հին գոհարեղէնին դէմ, աւելի իր արտաքինով ուշագրաւ ու համալրելի՝ քան իր սրտով:

Հին կ'ինըրը ըլլալու կ'աշխատէին. նորերը երեւալու կը ձգտին: Երբ այս ձգտումը կայ՝ սիրտը միշտ պիտի անտեսուի. ինչ հարկ ներքին բարեմասնութեանց զարգացման աշխատելու, երբ անոնք չպիտի երեւան. աւելի խելացի՛ չէ՞ չպարն ու տեսանելի պաճուճանքը աւելցընել: Ինչպէս որ ոսկերչութեան մէջ արուեստը իր կեղծին հետ յառաջացիր, և զուտ ձեւական՝ մակերեւութային, հետեւաբար նաև ներքին արժէքէ վուրկ շքեղանք մը դարձեր էր, այնպէս ալ կանաչի սեւին յառաջգիմութիւնը իր կեղծին հետ ճամբայ կարեր է, և այս սիրտի բարիաները գոյացիր են:

Մեծագոյն օփառը՝ զոր հին կ'ինը կը տանէր ամուսնին՝ իր սիրտն էր. և այդքանը ինքնին անբաղդատելի էր, որովհետեւ կ'ինը իր սիրտովն է կին: Ասոր համար չէ՞ արդէն որ էրիւմարգիկ իրենց կ'ինըրը կը գնէին: Նորերը՝ հաղարումէի բաներ կը տանին. ո՛չ միայն դրամ կը բերեն իրենց ամուսնին, այլ նաև գաշտակ կը զարնեն, ուսեալ են, օտար լեզուներ կը խօսին, պարել գիտեն և սոխակներու պէս ալ կ'երգեն: Բայց ասոնց ամէնը երբեք չեն կրնար փոխարինել սիրտը. արդէն պատրոզ շղարշներ են որոնց մշտագէս ու եթերային գուլաներուն տակ սիրտին աղքատութիւնը կը ծածկուի:

ԱՐԱՄ ԱՆՏՈՆԵԱՆ

Ք Ր Ք Ի Ջ Ն

Ժամը վեցուկէսին վաղահ էր թէ ան պիտի դար և չախագանց ուրախ էի: Սառնային հով մը կ'ուռնայէր վերարկուս, որ վիզէս մինակ կոճակնւած էր. բայց չէի մտեր. գլուխս հպարտօրէն վեր նետած էի և ուսանողի գտակո մինչեւ ծոճրակս իջեցուցած. եւ արհաւիրեալ կ'ուզէի անցորդներուն՝ համարձակութիւն ու պաշտպանութիւն կ'արտայայտէր ան. երբ անոնք կ'ընային, անարկա փայրայել կը դառնար. իրաւ էր թէ չորս օրէ ի վեր մէկ հողի մը մինակ կը կը սիրէի, բայց այնքան երիտասարդ էի ու սիրտս այնքան հաշուատ էր որ չէի կրնար կատարելագոյն անտարբեր մնալ միւս կ'ընկերուն հանդէպ: Եւ այսպէս քաղուածքս կայտառն, վատահ ու ուսուստուն էր:

Եօթնին քառօրը մնացած, վերարկուս երկու կոճակով կոճկած էի, և չէի նայեր ալ կ'ընկերուն, ոչ արհամարհանքով և ոչ ալ փայտաշանքով, բայց ուսելի դարչանքով: Ես մէկ կնոջ մը պէտք ունէի: Միւսները թո՛ղ ստատանին երթային, էւել կուգային անոնք ինծի, և իրենց կեղծ նմանութիւնը «անոր» հետ, չարժաններս անխտան և խիստ անկայուն կը դարձնէր:

Եօթնին հինգ մնացած, կրակ կտրած էի:

Եօթնին երկու մնացած՝ կը սրտէի:

Եօթնին, կը մտածէի թէ չպիտի դար:

Ութուկէսին աշխարհի է՛ն խղճալի արարածն էի:

Վերարկուս վերէն վար կոճկած էի, օձիքներս վեր զարձուցած, և գլուխս մինչեւ կատուացած քիթս իջեցուցած. մաղերս, պիտերս ու արուսանաւունքներս ճերմկեցիք էին, և արհամարհա իրարաւ կը զարնուէին թեթեւօրէն: Դանդաղ ու թափառկոս գնայքիս և կորացած քամակիս չնորձիւ էր որ զիս ծերունի մը տեղ կ'ընային դնել, ծերունի մը որ դեռ երիտասարդութեան հովերը ունի վրան:

Եւ սակայն այդ կ'ընն էր այս բոլորին պատճառը. օ՛հ, անպի... բայց ոչ. թերե՛ւս... չէր կրցած մեկնիլ, թերեւս հիւսնդ էր, կամ մեռա՛ծ, մեռա՛ծ... և ես զինքը դեռ կը նախատէի:

Ռ.

— Էօթէնի Իվանօֆնան ալ այս գիշեր հոն պիտի դայ, կ'ըսէր ինծի առանց կանխամտածում ընկերներէս ուսանող մը, անիկա չէր կրնար գիտցած ըլլալ թէ ես այդ աղջկան կը սարսէի վեցուկէսին մինչեւ ութուկէս, դուրսը, ցուրտին:

— Ս'հ, պատասխանեցի, պատրաստամտութեան չնորձիւ, և սակայն հողիւս խորէն կ'ընէի: Օ՛հ, թշուա՛...

— «Հոն» ըսելով՝ Բօլօղօֆի երեկոյթը ըսել կ'ուզէր. Բօլօղօֆներուն բնաւ չէի գայած. բայց այդ գիշերը սրշած էի երթալ:

—Պարոններ, պռապի զուարթօրէն, այսօր Ծնունդ է, այսինքն ընդհանուր տօն մը և կ'երթանք քիչ մը զուարճանալու:

—Բայց ի՞նչպէս, պատասխանեց անդիէն մէկը՝ մեկամաղճոտ չեշտով մը:

—Բայց ո՞ւր, յարեց ուրիշ մը:

—Դիմակաւորուինք և բոլոր երեկոյթներուն երթանք, որոշեցի:

Եւ այս անգգաները իրաւցնէ խելքերնին կը թռցնէին: Կը պռապին, կը ցատկէին, կ'երգէին: Շնորհակալ կ'ըլլային ինծի և իրենց տրամադրած գրամը կը հաշուէին: Կէս ժամ վերջը, ամէնքս ալ, քաղաքին բոլոր տիւր ու մարդ-մարդատանք չունեցող ուսանողներս, հաւաքուեցանք, մազայարդարին դայինք, որ միանգամայն հանդերձաւածու ալ էր, և իր խանութը լեցուցինք ցուրտով: Երկտասարդութեամբ և խնդուքներով:

Խորհրդաւոր գեղեցկութիւն ունեցող բանի մը պէտք ունէի ես, վայելուչ տիւրութեան մը լուրջ արտայայտութեամբ, ու ըսի.

—Սպանիացի ազնուականի մը հագուստը տուէք ինծի:

Կ'երեւար թէ չառ մեծ ազնուականի մը հագուստն էր ան, որովհետեւ անոր մէջ բոլորովին կը կորսուէի և բոլորովին միմտակ կը զգայի ինքզինքս, ինչպէս ընդարձակ ամոյացած սրահի մը մէջ: Հանուեցայ և ուրիշ բան մը ուզեցի:

—Միմտի հագուստ կ'ուզէ՞ք:

—Հտպիտի, պռապի արհամարհանքով:

—Գողի մը ուրեմն: Ատիկա կը յարմարէր ծրագիրներուս: Դժբաղդաբար այդ հագուստը զոր ինծի տուին, հազիւ չափահասութեան հասած մէկունը կ'երեւար. գլխարկը հազիւ գանկիս կէսը կը ծածկէր: Թաւշեայ նեղ տափտան ալ քաշեցին հանեցին. մանկլաւիկի՝ հագուստը չի վայելց, վազրի մորթի պէս պիտակուած էր ու կրօնաւորի հագուստը ծակ էր:

—Է՛հ, դժուար, բայց ուշ ես մնացեր, կ'ըսէին ընկերներս, որոնք հագուած էին և կը ստիպէին որ որոշում մը տամ: Մէկ հագուստ մը կը մնար, չինացի ազնուականի մը հագուստը:

—Մանտարէններ տուէք, ըսի յուսահատ. ու բերին:

Աստուած միայն գիտէ թէ ի՞նչի կը նմանէր. լուռ տխուր կոշիկներ կ'անցընէի ոտքս որոնք չառ պզտիկ կուգային և որոնց մէջ կէտով հազիւ կը մանար ոտքս. չեմ ուզեր խօսիլ այն վարդապետ քուրջի կտորին վրայ գլխարկի անունով, որ երկու թիւերով ականջիս կը կապուէր, անանկ որ ականջներս մուկի ականջ կը դառնային:

—Բայց դիմա՛կը...

Սոսկալի՛ դէմք մըն էր, արտառոց աչքեր ու բերան մը ունէր, իրարու համեմատական, բնայ երբեք մարդկային: Իր գերեզմանին մէջ՝

խակ՝ մարդ ատանկ զէմք մը չէր ունենար։ Դիմակը ո՛չ տխրութիւն ո՛չ ուրախութիւն և ո՛չ ալ զարմացում կ'արտայայտէր. ոչի՛նչ կ'արտայայտէր։ Դիտողին կը նայէր կարծես, զանդազօրէն, այնպէս որ անխուսափելիօրէն կը խնդացնէր։ Ընկերներս, կոկորդալիւր կը ծիծաղէին, թիկնաթուռներուն վրայ կը գլորէին և թեւերնին շարժելով և ուժաթափ։ «ասիկա է՛ն ինքնատիպ տարազը պիտի ըլլայ» կ'ըսէին։ Լալս կ'ուգար, բայց երբ ականարկ մը նետեցի հայելին մէջ, ես ալ խնդալ սկսայ և ըսի. «Այո՛, ասիկա է՛ն ինքնատիպ պիտի ըլլայ»։

Ճամբան ընկերներս յայտարարեցին։

— Բնա՛ւ դիմակնիս չհաննաք, ինչ որ ալ ըլլայ. պատուոյ խօ՛սք...

— Խօ՛սք, խօ՛սք... գոչեցինք։

Գ.

Իրողցնէ ամէնէն ինքնատիպ հագուստն էր իմս. շատեր ինծի կը հետեւէին և զիս կը դիտէին, կը մղէին, կը կամթէին և երբ յոգնած՝ զիս չարչարողներուն կողմը կը դառնայի կատաղօրէն, անտանելի կերպով կը խնդային։ Բոլոր ճամբան, ազմկալից խնդուքներէ չըջապատուեցայ ու խղիւղիւս եկաւ. չէի կրնար այս տիմար զուարճութեան չըջանակէն խուսափիլ։ Վայրկեաններ եղան որ ես ալ կ'ընկճուէի, կը պուայի, կ'երգէի, կը պարէի, և անոնք որոնք զիս կը չըջապատէին, աչքիս գինովի պէս կ'երեւային։ Եւ որքան հեռու էին անոնք ինծէ... ա՛յդ մարդիկը. և ես որքան մինա՛կ դիմակիս տակ...

Վերջապէս զիս հանգիստ ձգեցին։ Կատաղութեամբ և վախով, շարութեամբ և փափկութեամբ, կը դիտէի «զայն» և կ'ըսէի իրեն.

— Ե՛ս եմ...

Արտեւանունքները յամրաբար բարձրացուց և զարմացումով, սեւ շողերու ամբողջ խուրձ մը զիս ողողեց. յետոյ քրքիջ մը, հնչուն, ուրախ զօրաւոր գարնանային արեւու մը պէս. քրքիջը պատասխանեց ինծի.

— Ես եմ, այո՛ ես եմ, կրկնեցի իրեն ծիծաղելով. ինչո՞ւ այսօր չեկաք...

Բայց ան կը խնդա՛ր, կը խնդա՛ր։

— Այնքան չարչարուեցայ, ա՛յնքան սիրաս ցուեցաւ... կ'ըսէի ու պատասխան մը կը պաղատէի։

Բայց ան միշտ կը ծիծաղէր, իր աչքերուն սեւ ցոլքը մարտծ էր. բայց այրող արեւ մը կար հիմա անոր մէջ, անգուլթ ու աններող.

— Ի՛նչ ունիք, ի՛նչ կ'ըլլաք կոր...

— Դո՛ւք էք, կ'ըսէր ինծի, ա՛հ... որքան ծիծաղելի՛ էք։

Ուսերս կը կռէին, գլուխս կը ծռէի ու յուսահատութեամբ կը լեցուէի. և մինչ ան ժպտուն կը դիտէր երիտասարդ ու զուարթ գոյգերը, ըսի.

—Ամօթ է խնդարը. չէ՞ք դժար թէ այս ծիծաղելի դիմակիս ետին մէկը կայ որ կը տառապի... միմիայն ձե՛զ տեսնելու համար անցուցի դիմակը դէմքիս. դիս յուսացուցիք և հիմա այդ յոյսը այդքան չուտ, այդքան անգթօրէն կը մարէք. ինչո՞ւ չեկաք այսօր...

Ինծի՞ դարձաւ անմիջապէս ու իր ժպտուն սիրելի շրթներովը պատմատխտնեց և անգուլթ քրքիջ մը արձակեց։

Գրեթէ լալով, իր դէմքը անուշահոտ ու տանդելէ թաշկինակով դոցեց և ըստ գոհարաւ։

—Դիտեցէք... ինքզինքնիդ... հո՛ն... հայելիին մէջ. օ՛հ, որքա՛ն ծիծաղելի էք։

Արտւումունքներս խոժոռած, ակումներս ցաւով սեղմած, սառած դէմքով մը ուր արիւնը հատեր էր, հայելիին մէջ կը նայէի. ու տեսայ թէ ի՛նչ սալուշ դիմադիծ մը ունէի, յամառ անտարբերութեամբ մը և անշարժութեամբ մը որ ոչինչ ունէր մարդկային։ Եւ... սկսայ ծիծաղիլ։

Եւ հազիւ ուրախ քրքիջ մը արձակեցի, յանկարծ ծնող կատաղութեան տարտուգով մը, որ յուսահատութեան յիմարութիւնն էր, ըսի, գրեթէ պոռացի։

—Պէտք չէ՛ որ խնդաք։

Երբ հանդարտեցաւ, ցած ձայնով կը խօսէի անոր սիրոյս վրայ։ Եւ երբեք արտայայտած չէի ինքզինքս կամ խօսած աւելի պերճախօսութեամբ, որովհետեւ երբեք այնքան ջերմութեամբ չէի սիրած։ Սպասումի տանջանքներուն, յիմար նախանձիս ցաւոտ արցունքներուն ու վշտիս, ինչպէս նաեւ սիրով լեցուն հոգիիս վրայ կը խօսէի իրեն։ Եւ կը տեսնայի իր թարթիչներուն խոնարհիլը, և թանձր շուք մը ձգելը ամփոռած այտերուն վրայ և անոնց անխալ ձերմակութեան մէջէն կը նշմարէի բոցը որ կը մարէր կարմիր ցոլք մը արձակելով և իր ճկուն մարմնը գրեթէ ակամայ ինծի կը հակէր։ Գիշերային պարիկի մը պէս հազուած էր, առեղծուածօրէն հազուած, և սեւ ժապաւէններու մէջ, ուր փայլուն կէտեր կը վառէին, գեղեցիկ էր՝ հեռուոր մանկութեան մը մոռցուած երազին պէս... Կը խօսէի և արցունքներ կուգային աչքերուս, և սիրտս կը դարձնէր ուժով։ Տեսա՛յ, տեսայ վերջապէս գթութեան սիրելի ժպիտ մը իր շրթունքներուն վրայ. թարթիչները բարձրացան քիչ մը դողդղալէ ետքը։ Դանդաղօրէն, վախճալով, յետոյ անհուն վստահութեամբ մը, գլուխը ինծի դարձուց և...

Ատա՛նկ քրքիջ բնաւ չէի լսած...

—Ո՛չ, ո՛չ, չեմ կրնար։

Գրեթէ կը հեծեճէր և՞ գլուխը ետին կը նետէր, յետոյ նորէն ազմկալի քրքիջ մը փրթաւ արձագանգելով։

Օ՛հ... եթէ վայրկեան մը դոնէ մարդու դէմք ունենայի: Շրթունքներս կը խածնէի, արցունքները կը սահէին այտերուս վրայէն, բոցավառ այտերուս վրայէն և այս ապուշ դէմքը, ուր ամէն ինչ ճիշդ էր, բերան, ա՛չք, չրթունք, իրենց անդրդուելի պաղարիւնին մէջ կը քնային սարսափելի տխմարութեամբ, և երբ կը հեռանայի գրեթէ կաշաւով կոշիկներուս մէջ, լսեցի տակաւին այդ հնչեղ քրքիջը: Արծաթ ջուրի մը ջրվիժումին կը հմանէր ան, որ անհուն բարձրութենէ մը կ'իջնար և զուարթ յանկերգով մը կը փչրուէր ժայռի մը դէմ:

Գ.

Հեռացանք, տարածելով ամայի փողոցին ու դիշերին հանդարտութեանը մէջ մեր ձայներուն գրգռուած ազմուկը: Այն ատեն ընկերներէս մէկը պոռաց ինծի նայելով.

—Անուր յաղթանակ մը տարիր... երբեք տասնի ծիծաղներ չէի լսած կեանքիս մէջ... բա՛յց, սպասէ՛... ի՛նչ, կ'ընես... ի՛նչո՛ւ կը պատուես գիմա՛լը... բայց տղա՛ք... ապո՛ւշ է ի՛նչ է... նայեցէ՛ք... հաշուս անըրը կոտ՛ր կոտ՛ր կ'ընէ... նայեցէ՛ք... կու՛լայ կոր, կը հեծկկայ կոր... բա՛յց... ի՛նչ ունիս...

Թարգմ. ՀՐԱՆՏ ՆԱԶԱՐԵԱՆ

ԼԷՈՆԻՏ ԱՆՏՐԻԷՑ

Ա Ր Զ Ա Գ Ա Ն Գ

Այս խորագիրին տակ, պարբերաբար Մասիսի մէջ պիտի երեւան պատկաններ Խմբագրութեան իրաւած այն բանաստեղծութիւններուն եւ գրութեաններուն վրայ, որոնք զուրկ հրատարակելիութեան հանգամանքէն, բնական պրզումի մը միայն կրնան միւս բլաւ՝ սկսնակներու գրական վարձերուն վրայ: Այդ բնութեան տղիւնքին՝ Մասիսի մէջ հալիրճօրէն հրատարակումին նպատակն է աւաշեւոր բլաւ նարստաներուն՝ իրենց գրական խորխափումներուն մէջ:

Զ... — Պոլիս. —

Առուակին առ եզերք գարնայնի?

Առաւօտ մի նախշուն! դպլտայի

Կոյսին անուշակ ձայնն արի?

Որմէ հոգիս յար զմայլի

Տակաւին չե՞ն մոռցում «առուակ»ներու, «առ եզերք»ներու, «գարնայնի»ներու, «կոյս»ներու, «մի»ներու, «ամուսակ»ներու նախապատկան յանկերգները: Անանկ համագումար է՛ք որ ի-ի վերջացածին պէս ռանաւորին ծայրը՝ բանաստեղծութիւն կ'ըլլայ: Զեր տղերուն ամբողջութենէն անանկ կը հետեցնենք որ՝ աւելի յարմարութիւն ունի՛ կիրակի օրերը ձեր «արի»ն գեղգեղելու եկեղեցիին մէջ, քան տաղաշափում տղերու:

Խ... — Ստամբ. — Կ'աղաչե՛ք, կը պաղատե՛ք որ հրատարակուի ձեր «ուսումնասիրութիւնը»... տղիակին! վրայ. բայց դու՛ք ալ չե՛ք զիտեր քէ ի՛նչ կ'ըսե՛ք անոր մէջ: Կ'աւելցնե՛ք քէ արհեստով յանձնակատար է՛ք, եւ ձեր գրութեան հրատարակումը քաջալերութիւն մը պիտի ըլլայ ձեր «անձին ու գործին զարգացման»: Զեզի խաւս մը, աւելի աղէկ չըլլա՞ր որ Մասիսի մէջ... ծանուցում մը տա՛ք ձեր... յանձնակատարական գործին. ասիկա աւելի մեծ քաջալերութիւն մը չը՞ պիտի ըլլայ ձեր «անձին ու գործին զարգացման»:

ՔՐՈՆԻԿ

Տ. Օրմանեան Ս. Պատրիարքի Կ. Պոլիսի պատրիարքական աթոռին վրայ պաշտօնավարութեան կ'ընկերանայ նշանակելի գործունէութիւն մը եկեղեցական և կրթական անօրինութիւններու, որոնք ժամանակակից եկեղեցական պատմութեան մէջ իրենց տեղը ունին: Պէտք է թուել շարքը իր ձեռներեցութիւնով գլուխ հանուած եկեղեցական այն օրինադրութիւններուն, որոնց պէտքը և օգուտը միշտ թէս'ան կը մնայ, կը բաւէ միայն միտք բերել պատկերները եկեղեցին կատարելու աւերիչ կանոնը:

Այս կարգի անօրինութիւններու կը յաջորդէ նոր վերջին մը, որուն նպատակն է Բարերարութեան գործին աստիճանաշար մը ստեղծման, ճշգրիտ համար արժէքը եղած բարերարութեան, ինչպէս անոր ծնունդած փառքին չափանիշը՝ բարերարողին վրայ: Խնդիրը կ'ընտան է, և ատակ՝ ներշնչելու բազմազան խորհրդածութիւններ: Անկախ միևնոյն ատեն ամենալուրջ կենսականութեամբ հարց մըն է, որուն մէջ պէտք չէ՝ հապճեպ ու թեթեւ դատաստանով վերջնական որոշումին յանգիլ, որովհետեւ անկէ կախում ունի նպատատար կամ անպատար լուծումը:

[1] Այդ կանոնին համեմատ, հանրային հաստատութիւններու բարերարողները պիտի դատարարուին պատուաւորներու սա չափանիշներով —

Ա. — Մօսսուրապէս 50-500 ոսկի տուողներ պիտի կոչուին ՆՈՒԻՐԱՏՈՒ այս ինչ Հասարակեան:

Բ. — 500—1,000 ոսկի տուողներ պիտի կոչուին ԱՐԻՒԻՆԱՒԱՐ այս ինչ Հասարակեան:

Գ. — 1,500—3,500 ոսկի տուողներ պիտի կոչուին ԵՐԱՆՏԱՒՈՐ այս ինչ Հասարակեան:

Դ. — 3,500—6,000 ոսկի տուողներ պիտի կոչուին ԲԱՐԵՐԱՐ այս ինչ Հասարակեան:

Ե. — Եւ, վերջապէս, երբ մէկը 6,000 ոսկի տուելի մեծ գումար մը կամ կալուած մը եւլն, նուիրէ, պիտի կոչուին ԲԱՐԵՐԱՐ ԱԶԳԻՆ:

Բարերարելու Դործին, ինչ որ իր մեծ նշանակութիւնը ունի մեր հանրային կրթական և եկեղեցական հաստատութիւններուն համար: Զեռնարկին ձգտումը վճարկան ձեւ մը ունի, և անոր արդիւնքը կոչուած է ըլլալ նոյնչափ վճարական Պէտք է ուրեմն հաշուել նշանակութիւնը աւելուած քայլին, որովհետեւ անկէ կախում ունի դէպի յոռին կամ բարին ուղղուած ճակատագիրը այն հաստատութիւններուն՝ որոնց վրայ է որ՝ կը կեդրոնանան բարեգործական աւառածեռներ թիւնները մեր հասկնքին: Երբ ձեռնարկը յոռի արդիւնքով մը պատկուի, քայլը անգարձ ու անվերականգնելի է, և ան իր չարքիքի սերմերը միայն կրնայ ծաղկեցնել այն ատեն, ամենամեծ դժբաղդութիւն մը դառնալով լուրջ այն կրթական ու եկեղեցական յարկերուն, որոնք նպատակ մը, բարերարութեան մը աշխատութիւնովը կը սնին, անոր պէտք ունին, և անոր յաւանք են իրենց աչքը, քոնի որ իրենց կեանքն է ադա Արդ, ի՞նչ ապահովութիւններ կան՝ համոզող մեզ թէ՛ բարերարութեան չափին համեմատ տնտեսութիւն մը ստեղծումը պատճառ պիտի ըլլայ բարեգործութիւններու բազմապատկում: Մարդկային զգայուններու մէկ տխուրութեան հետեւանքով, մարդիկ իրենց բարերարական եռանդին մէջ որչափ կ'առաջնորդուին սրտաւառ զգացումներէ, նոյնչափ իրենց հոգիին մէջ մեծ տեղ մը կը գրաւէ — ու մեծագոյն տեղը — փառաւորուելու և երախտագիտական ցոյցեր պարտաւորելու փորձութիւնը: Ստեղծուած օրէնքին համեմատ, մարդիկ իրենց տալու քանակովը պիտի կշռուին փառքի կշիռին մէջ: Ո՞վ պիտի ուզէր այդ կշիռին թաթին վրայ թեթեւ տարողութեամբ մը օդին մէջ աւելախուիլ ու ծածանիլ ողորմելի անհաւասարակշիւութեան մը ճօճումին ենթացալ փառքացած կրքովը անյաղ սիրտին՝ որ Մարդը կը յառկանէ, ամէնքը պիտի ուզէն պատուանունի ցանկին դադարձնակեանը դանդաղ, և այդ տեսչանքին անհնարութեան առջեւ, կտրելի չէ՞ երեւակայել թէ՛ շատերը պիտի նախընտրեն հրաժարիլ իրենց սիրտի համեստ զգա-

ցումներէն, քան ցուցադրութեան դրութիւն պատուարնութեան հանրային կրկէսի մը մէջ: Առանց խիղճի ու կարողութեան հաւատարմութեան մը, մարդ երբ ձեռքը քսակին կը մծակցնէ, անկէ բաժին մը կը յատկացնէ իր սիրական մէկ հաստատութեան, ու կ'անցնի, մտահոգ չըլլալով երբեք թէ, ի՞նչ պիտի ըլլայ զնահատութեան չափը հանրային դատաստանին: Նոյն իսկ շատ անգամ, երբ սիրտն ալ չգրգեք զինքը մտածել զթուրթեան պէտքով մը զբաղելու, գնէ լոկ փառքի մը համար, պիտի բռնայ քսակին բերանը, աւանդելով որ քիչ տուողն ալ, շատ տուողն ալ միեւնոյն յարգանքին ու երախտագիտութեան իրաւունքը կը շահին: Բայց ի՞նչ պիտի մտածէ, երբ երեւակայէ թէ՝ իր զթուրթեան զգացումները մասնագիտական փորձաքարի մը պիտի զարնուին, և արժանաւորութեան, յարգի, աստիճանի չափանիշաւած տախտակ մը պիտի կախուի իր վիզին, զոր կուրծքին վրայ պատցնէրով չպիտի ուղէ երբեք ներկայանալ հանրութեան, հպարտութեան զգացումը շա՛տ ուժով բնագոյ մը ըլլալով Մարդուն հոգիին մէջ, Կասկածութեան այս օրէնքը, շատ շատ հարուստները պիտի քաջալերէ, անո՛նք՝ որոնք կարող պիտի զգան ինքզինքնին՝ թեւարկել բարերարութեան մինչեւ ամենէն բարձր գագաթները Բայց անոնք թիւր պիտի հակակշռէ՞ հաւաքական նուիրատուութեան չափը միւս ետ մնացողներուն, երբ անոնք միահամուռ քաշուին, ինչպէս հաւանական է: Եւ ի՞նչ պիտի ըլլայ հետեւանքը ստոր, երբ տեսնուի բարերարութիւններու ընդհանուր գումարին մէջ անբաւական նուազում մը: Կարելի պիտի ըլլայ առաջըր առնել անոր, երբ անգամ մը միտքերու հոսանքը գէպի յոռին ուղղութիւն մը առած ըլլայ: Դիտութեան նպատակովը ապրող և անոր կարօտ հանրային հաստատութիւնները ասով տուժած պիտի ըլլան թէ շահած, և ի՞նչ դարման պիտի կրնայ խորհուիլ, երբ բարերարելու զգացումին աղբիւրը օրէ-օր ցամքի, իրերու բնական ընթացքով և չարքըր լայն հաւամտութիւն մը առնէ: Կարելի չէ՞ երեւակայել այն ատեն ան ճակատագրէրը, զոր պիտի դիմաւորեն անոնք, Ազնուպետական ձեւ մը ունի այս ճրագիրը, որ քաջալերել կողմ մը չներկայացնէ:

Հիմնադիր. Կ. Ս. ԻԻԹԻԻՃԵԱՆ: Արտօմատ. ՏՕԹԹ. Ե. ՄԱՍԻՍ: Տպ. Յ. ԱՍԱՏՈՒՐԵԱՆ

Վճռական քայլը առնելէ առաջ, կ'արժէ խորհրդածել երկար ատեն ձեռնարկին տմէն կողմերուն վրայ, որովհետեւ անկէ կախում ունի յոռի կամ փայլուն ճակատագիրը Գլխութեան և Բարեգործութեան հովանիին ապաւինած հաստատութիւններուն: Ե. Ա.

ՅԱԶՈՐԴ ԹԻՒՈԿ

ՄՈՒՇԵՂ ԵՊԻՍԿՈՊՈՍ

ԲՐՈՑ. ՅԱՎՈՐՈՍ Զ. ՃԷՃԻՋԵԱՆ

Ռ. Յ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

ԱՐԱՄ ԱՆՏՈՆԵԱՆ

ԱՐՏԱՇԷՍ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

ՄԵՐՈՒԺԱՆ ՊԱՐՍԱՄԵԱՆ

ԵՒ ՈՒՐԻՇՆԵՐ,

Մուշեղ Եպիսկոպոս Մասիսի խոստացած լայն աշխատակցութեան մը սկզբնաւորութիւնը եղող առաջիկայ թիւի յօդուածին վերեւի յիշատակութեան ետքը, —ինչ որ վստահ ենք թէ մեծապէս պիտի ուրախացնէ մեր բնութեցողները, — հաճոյքով կը հաղորդենք նաեւ թէ, Բրոց. Յակոբոս ձե՛ծիգեան, պատիւը կ'ընէ իր լրագրական փնտռումը գործունէութեան բեմ ընտրելու Մասիսը, ընդունելով մեր խնդրանքը իր սիրելի աշխատակցութեան, բացառապէս Մասիսի, քանի որ ո՛չ մէկ թերթի կը գրէ: Ամէն անոնք, որոնք ասկէ առաջ Բիւրակին մէջ հաճոյք ունէին կարգաւ յարգելի Բրոցեանօրին իմաստային ու պերճաբօս յօդուածները, և որոնք ճանչցած են այն հմայիչ գրականութիւնը՝ որ իրն է, վստահ ենք թէ ուրախութեամբ պիտի ողջունեն իր վերերեւումը Մասիսի էջերուն մէջ, զոր յաճախակի պիտի օժտէ իր գրչին յատուկ այն ներհուն յօդուածներով՝ ուր գրականութիւն, իմաստասիրութիւն և բարոյական սկզբունքներ կը ձուլուին վարպետի մը ձեռքին տակ:

“ՄԱՍԻՍ”, Ի

“ՅԱԶՈՐԴ ԹԻՒՈԿ

Բացառիկ կերպով պիտի իրաւաբաւութի մոլի ճիւղերով ու յաւելումաւակամ էջերով, իր Ծնունդի Բացառիկ Թիւ:

ԲԱՃԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Մարտիս բանաձևորդադրութեան մէջ, ընթերցողները օժտելու համար
գրական հրատարակութիւններով, հաստատած ենք քաղերներու գրութիւն
մը, որ հաճելի ու շահաւէտ առիթ մը կը հնայ ըլլալ ամէն ընթերցողի
համար: Դեկտ. 1 էն մինչեւ երկու ամիս Մարտի բանաձևորդադրութիւն
փութացող ո՛ր եւ է ընթերցող՝ իրաւունք պիտի ունենայ ստանալու
էջերու գրական հատորներ՝ օրուան ամէնէն այժմէական հրատարակութիւն-
ներէն, իրենց քնարանքին համեմատ:

Այդ հաստոյնէլն եւս

ՅՈՒՐԵՐ.	—	ՍԻՊԻԼ	Գիմ	5	դր.
ՇՐՈՒՆԵՐ.	—	ԱՐՏԱՇԷՍ ՅԱՐՈՒԹԻԻՆԵԱՆ	»	5	»
ԿԻՆԸ.	—	ԵՆՈՎԲ ԱՐՄԷՆ	»	5	»
ՆԵՐՍԵՆՍԻՐԸ.	—	ԻՆՏՐԱ	»	12	»
ԱՆԲՋԱՆԵՐ.	—	Մ. Ա. ՊԱՐՍԱՄԵԱՆ	»	5	»
ԼԵՊՈՒՍԷ ԴԵՍԻՐ.	—	ԱՐՏԱՇԷՍ ՅԱՐՈՒԹԻԻՆԵԱՆ	»	5	»

Մինչև Երկու տարի կը տեւէ պոլիմանտամը այս պորդեւաւոր բա-
ժանորդադրութիւնէն օգտուելու առիթին, որմէ ետքը բաժանորդադրուող-
ներ չպիտի կրնան նպաստաւորելու անկէ: Իսկ անոնք որ փութան մինչեւ
այդ պայմանաւորին լրումը բաժանորդադրուել Մանիսի, աւանց որ եւ է
բայցաւիկ վճարման, փերելի հրատարակութիւններէն իրենց ընտրանքին
համեմատ իրաւունք պիտի ունենան ոտնադու 10 դրշ. նոց գիրք, զոր
թղթատ սրի ծախքը (3 դրշ.) մեր վրայ՝ պիտի փութայնենք իրենց հաս-
ցէին՝ իրենց բաժանորդագիրին առաքման յաջորդ թղթատարով: Յայտ-
նագէս զգալի է թէ, անուշղակի կերպով 13 դրշ. ի գեղջ մըն է Մանիսի
բաժանորդադրութեան վրայ նուէրի՝ այս դրութիւնը, զոր հաստատած
ենք՝ հիմնադէս գիւրամատչելի և աման ընծայելու համար Մանիսի բա-
ժանորդադրութիւնը, և ընթերցողները օժտած՝ վերջին ամէնէն փնտռուած
գրական հրատարակութիւններով:



Ձեռքի, ոտի ու ոտի եւ ձեռքի
միանգամայն մեքենաներ
կը գտնուին:

Ասկարելի է որ ընտանիք մը առանց
կարի մեքենայի մնայ, բայց էական կէտն է
լաւ մեքենայ մը ունենալ, որովհետեւ լաւ
մեքենայ մը անթիւ եւ անհամար ծա-
ռայութիւններ կը մատուցանէ, մինչդեռ
դէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգո-
հութեանց եւ տաղտուկի աղբիւր մըն է:
Բոլոր աշխարհ գիտէ թէ՛

ՍԻՆԿԵՐ

ՀԱՅԹԱՅԹԻՉ ԿԱՅՍ. ՊԱՐԱՏԱՆ

The Singer Manufacturing Cie.

մեքենայ լաւագոյնն է. այս մեքենան տ-
մէնէն աւելի կատարելագործուածը, հա-
տառունը եւ դիւրագործածելին ըլլալուն
բովանդակ աշխարհի մէջ՝ ամէն ոք Սինկերի
մեքենաները կը գնէ:

Սինկերի մեքենաները կը ծախուին միմիայն Սինկեր Ընկերութեան
վաճառատուններուն մէջ՝

ՀԱՅԹԱՅԹԻՉ
ՊԱՐԱՏԱՆ

ԿԱԼԱԹԱ

1. Մեծ փողոց, Պօն Մառշէի դէմ, թ. 343 եւ 343
2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիւէին դէմ.

ԲԵՐԱ

1. Սինկեր խան, Թիւնէլին ետեւը.
2. Գարաքէօյ, Թրամվէյին կայարանին դէմ.

ՊՈԼԻՍ

1. Սուլթան համամ.
2. Սուլթան Պէյազլաթ, Թրամվէյի կայարանին դէմ. 13.

ՍԱԻՏԱՐ

Չարչը Պօյու, թ. 120.

Դասեր եւ նորոգութիւններ ձրի.

Կատարելաբար երաշխաւորուին:

Մասնահիւղեր գաւառներու բոլոր քաղաքներուն մէջ:

Սինկերի Ընկերութեան կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ
Փողոց, Թիւ. 343 եւ 343 կրկին, Սարգիս Պէյ Տիւզդլուի տունը:

(5—10)

ՏՕՔԹ. Ե. ՄԱՍԻՍ

ԲԵՐԱ, ԹԱԳՍԻՄ ՓՈՂՈՅ, ԹԻԻ 12

Ամէն տեսակ ներքին հիւան-
դութիւններէ զատ, մասնագի-
տաբար եւ երկար տարիներէ ի վեր
կը դարմանէ ստամոքսի, աղիք-

ներու միզային, ճամբաներու հիւանդութիւնները, ջրային տկարութիւն-
ները, հին եւ նոր գաղիական ախտերը: Այս վերջին ախտերը՝ առանց
ստամոքսի ֆանգարման եւ նորագոյն մեթոտներով կը բուժէ կարճ մի-
ջոցի մէջ: Հիւանդ կ'ընդունի ամէն օր կէս օրէ վերջը: Չորեքշաբթի
օրերը միայն ձրի:

(5—10)

ԱՐՐԱՀԱՄ Կ. ԿՏԱԻՃԵԱՆ Ի ՁՄ Ի Տ

Կը ստանան

Հրդեհի և ծովային ապահովագրութիւններ՝ շահաւէտ պայմաններով :
Ամէն տեսակ գումարի գործեր, ներածում, արտածում և մաքսային
գործողութիւններ :

Եւրոպական առաջնակարգ գործարաններու միջոցաւ՝ գունաւոր և պարզ
պատկերազարդ քաւթ—փոսթալներու պատրաստութիւն, Ֆոթոկրաֆի
համեմատ :

Կը հալթայք

«Թոմաս Սքիտոր» Անգլ. Տան դրամարկներէն :
Սաքսոնիոյ առաջնակարգ բիւնցներ՝ չարաթական վճարումներով :
Ամենակերպի դրութեամբ պիւսիէքներ :
Ամէն տեսակ երկրագործական և թիթեղագործի մեքենաներ :
Ուղում քանակութեամբ և տեսակով ընտիր և հոտաւէտ թէյեր :
Գաւառային յանձնարարութիւններ փութով կը կատարուին :

Հասցէ՝

ԱՐՐԱՀԱՄ Կ. ԿՏԱԻՃԵԱՆ, Իզմիտ (5-10)

ՌՕՍԻԱ — ROSSIA

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀՐԴԵՀ, ՓՈՒՍԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ԱՐԿԱՄՆԵՐ

1881 մարտի 20-ի Կայս. Ուրազով արտօնուած :
Կեդրոնապետի Բեղերսպուրի, իրեն յատուկ շէնքը :
Ընկերութիւնը խիստ նպաստաւոր պայմաններով ապահովագրութիւններ
կ'ընդունի :
ՀՐԴԵՀԻ, ՓՈՒՍԴՐՈՒԹԵԱՆ ՎՏԱՆԳՆԵՐՈՒ, ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՐԿԱՄ-
ՆԵՐՈՒ, ինչպէս նաև ՀԱՅԵԼԻՆԵՐՈՒ ԵՒ ԱՊԱԿԻՆԵՐՈՒ կոտորու-
լուն դէմ :
Ընկերութեան դրամագլուխը, ամբողջապէս վճարուած 10,666,666 ֆր.ք.
Երաշխաւորութեան գումար աւելի քան 149,852,000 »
Ընկերութեան ապահովագրողներուն վճարուած 355,840,000 »
դրամագլուխ և վնասներու հատուցում 64,553,800 »
1903 տարւան մէջ գանձուած ապահովագրին և պոկոս
Ամէն տեսակ տեղեկութեանց համար դիմել Կ. Պոլսոյ մանաճիւղին,
Ազարեան խան, Վոյվոտա, Ղալաթիա : (5-10)

"ՄԱՍԻՍ"Ի ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Պոլիսի և դաւասներու համար տարեկան

60

դր.

Արտասահմանի

»

14

ֆրանք:

Թղթատարութեան ծախքը մեր վրայ:

Բաժանորդները իրաւունք ունին ստանալ մեր պարգևներէն ճիշդաբերկու գիրք, իրենց ընտրանքին համեմատ, թղթատարութեան ծախքն ալ մեր վրայ:

Մասիսի բաժանորդագրութիւնը բացարձակապէս կանխիկ է:

Զնաւորուած ձեռագիրները եւ չեն դարձաւոր:

Նամակ կամ սր եւ է դրութիւն ուղղել Խմբագրութեան հասցէին.

«*ماہنامہ سب و سال*» ۵۲ «*سنة ۱۳۰۲*»

ԽՍԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ՄԱՍԻՍ»Ի

Պոլսի շուսսեի, թիւ 52. Կ. ՊՈԼԻՍ

Rédaction de la Revue „MASSIS“

Avenue de la Sublime Porte, No. 52.

CONSTANTINOPLE

ԽՍԲԱԳՐԱԿԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Տիար Թաղար Տէօքմէճեան. — Ծնորհակալութեամբ ստացանք Զէյթունի կեդրոնական Ուսումնարանի տարուան մը Մասիսի Զեր նուէրը և թերթերը սկսանք զրկել 1 թիւէն, ինչպէս ձեր բաժանորդագիրը: Նոյնպէս՝ Տեարք Յակոբ Գրիգորեան, Թ. Ե. Գաբակէօղեան, Մարթէն Յակոբեան, Բիւզանդ Պաշիկեան, Զինոն Պալթազար, Յակոբ Ֆէրմանեան, Արամ Թորոսեան, Յարութիւն Կոստիկեան, Հրանտ և Լեւոն Գաղաղեան, և Յակոբ Բաիկեան: Տիար Հմայեակ Ուղուրեան. — Կը սպասենք միւս առաքումին: Ծնորհակալութիւն ձեր համակրութեան և Մասիսի օգուտին նուիրած ջանագրութիւններուն համար:

Ամասիաի, Մարգուանի, Հաճի Քէօյի և Վէլիբ Քէօփրիւի Մասիսի գործակալն է Հայկալն էֆ. Հապէշեան, որուն կրնան դիմել բաժանորդագրուելու փափաքողներ և յանձնել գրամը:

Դիս. — Մասիսի ձրի պարգևներէն ուղղներէ ոմանք՝ Ներսէսաւհը և միանգամայն ուրիշ գիրք մը կ'ընտրեն: Ինչպէս կը տեսնուի պայմաններէն, Ներսէսաւհի գիրք 12 դրշ. ըլլալով՝ զոյ՛ն ընտրող մը երկրորդ մըն ալ չկրնար ուզել: Միւս բոլոր գիրքերէն ո՛ր եւ է՛նկը հատ կարելի է ընտրել եւ ստանալ: